ՆՈՐ ԳՐՔԵՐ

(ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ)

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ, Ժ. Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ — *«Հին Հայաստանի ապակին» (I—IV դդ.), պրակ I.* 1969 թ., տպաքանակը՝ 2000:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակած «Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշարի այս պրակում նկարագրված են շուրջ 150 իր, որոնց գերակշռող մասը ապակյա անոթներ են:

Գիրքը կազմված է կատալոգի սկզբունքով. տրված է յուրաքանչյուր իրի կամ առարկայի նկարագիրը, հիշատակված է հայտնաբերման վայրը, ըստ հնարավորին որոշված են պատրաստման տեղը և ժամանակը, նշված են դամբարանների հերթական համարները և թանգարաններում պահվող իրերի գույքահամարները:

Պրակի առաջաբանում համառոտակի տրվում է ապակու հայտնագործման և ապակեգործության զարգացման պատմությունը մինչև մ. թ. *IV* դարը: Քննության է առնվում Հայաստանում հայտնաբերված անտիկ ապակին, նրա առանձնահատկությունները, պատրաստման ու մշակման եղանակները: Պարզվում է, որ իր արտադրության տեխնիկայով, մշակման ձևերով, զարդերի և գույների բազմազանությամբ Հայաստանում հայտնաբերված ապակեղենը կազմում է անտիկ դարաշրջանի ապակեղենի անբաժան մասը և մեծ կարևորություն է ներկայացնում այդ դարաշրջանի ապակեղենի ուսումնասիրության համար:

Տեքստը շարադրված է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Պրակն ուղեկցվում է հայտնաբերված իրերի 162 նկարազարդումներով: Խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Բ. Ն. Առաքելյանը:

Հ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ — *«Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր», պրակ* II, *1969 թ.*, տպաքանակը՝ 1500:

Վերջին հարյուրամյակի ընթացքում Հայկական լեռնաշխարհում կատարված պեղումներից հայտնաբերվել են նախնադարյան համայնական հասարակության ժամանակաշրջանի հազարավոր հնագիտական հուշարձաններ, որոնք մեր երկրի հնագույն մշակույթի, պատմության, կենցաղի ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման եզակի սկզբնաղբյուրներ են:

Այդ հուշարձանների մեջ իրենց բազմազանությամբ ու հարստությամբ յուրահատուկ տեղ են գրավում ուշ բրոնզի ժամանակաշրջանի (մ.թ.ա. *XIII—X* դդ.) հնավայրերը, որոնց ուսումնասիրությանն է նվիրված «Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշարի *II* պրակը: Այն ընդգրկում է մ. թ. ա. *X* դարի ուշ բրոնզեդարյան բնակատեղիների, դամբարանադաշտերի նյութական մշակույթի ընդհանուր նկարագրությունը, թվագրումը և բնութագրությունը: Հայտնաբերված նյութերի հիման վրա բացահայտվում է բրոնզեդարյան մշակույթի հասարակության սոցիալ-տնտեսական ընթացքի պատմության զարգացման ընդհանուր պատկերը:

Պրակն ունի ռուսերեն, անգլերեն ամփոփումներ ու հարուստ նկարազարդում: Գիրքը խմբագրել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ֆ. Ն. Առաքելյանը:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԾԻՐԱՆԱԾԻՆ — *«Բյուզանդական աղբյուրներ»*, Բ, 1970 թ., տպաքանակը՝ 3100, 368 էջ:

Ներկա աշխատությունը ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Օտար աղբյուրներր Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի 6-րդ գիրքն է: Այն բնագրից թարգմանել, առաջաբանը գրել ու ծանոթագրել է պատմական գիտությունների թեկնածու, բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանը:

Գրքում տրվում են բյուզանդական հայազգի Կոստանդին Ծիրանածինի աշխատություններից՝ Հայաստանին և հայերին վերաբերող հատվածները, նույն հեղինակի գրչին պատկանող Մակեդոնական հարստության հիմնադիր՝ հայազգի Վասիլ I կայսեր ընդարձակ կենսագրության, ինչպես և Քրիստոսի «Անձեռագործ պատկերի» մասին երկի ամբողջական թարգմանությունները:

Հատորին կցված է հավելված՝ Կոստանդին Ծիրանածինի ապրած ժամանակաշրջանին վերաբերող ծավալով փոքր գործեր, բյուզանդական օրենսգրքերի առանձին հոդվածներ, որոնք առնչվում են հայ ժողովրդի պատմությանը, և երկու աշխարհագրական քարտեզ՝ բյուզանդական կայսրության արևելյան բանակաթեմերի տեղադրության և բյուզանդական կայսրության արևելյան սահմանների վերաբերյալ:

Աշխատությունը արժեքավոր է IX և X դարի առաջին կեսի հայոց պատմության, հայ-բյուզանդական հարաբերությունների, հայերի՝ Բյուզանդիայում ունեցած դերի ուսումնասիրության համար: Ունի անձնանունների, ցեղանունների, տեղանունների և բյուզանդական տերմինների ցանկեր: Խմբագիրն է Ս. Մ. Կրկյուշարյանը: